**«ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Հասցե ՀՀ, ք.Երևան, Արամի փ. 1
ՀՎՀՀ 02907068

ք. Երևան *N 39 13 **ապրիլի** 2026**թ**.*

«ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ԻՆ
/firm2025@mail.ru/

**Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ**
**Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին**

«Մշակույթի զարգացման» հիմնադրամի ի դեմս Կարեն Ավետիսյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ» և «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի ի դեմս տնօրեն Գ. Խանվելյանի, որը գործում է «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» միջև 24.06.2026թ. կնքված N ՄՋՀ-ԷԱՃԱՊՁԲ-2025/02-7 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի 1.1 կետով սահմանվում է, որ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Սակայն պայմանագրով սահմանված ստանձնած պարտավորությունները չեն կատարվել ձեր կողմից, մասնավորապես՝ պայմանագարի 76-րդ չափաբաժնի ապրանքները չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետը, 8.11 կետը՝ «Մշակույթի զարգացման» հիմնադրամը միակողմանի լուծում է Մշակույթի զարգացման» հիմնադրամի և « ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի միջև 2025թ հունիսի 24-ին կնքված N ՄՋՀ-ԷԱՃԱՊՁԲ-2025/02-7 ծածկագրով պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Այսպիսով, «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ին տրվում է 10 /տասը/ օրացուցային օր՝ տուժանքներով սահմանված որակավորման՝ 295500 /երկու հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր/ դրամ և պայմանագրի 197000 /մեկ հարյուր իննսունյոթ հազար/ դրամ ապահովումների գումարները «Մշակույթի զարգացման» հիմնադրամի Ակբա բանկ ՓԲԸ Հ/Հ 220313350757000 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Վաճառողի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Վաճառողի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ